Պէտք է ցաւով արձանագրել, որ Հայաստանի Հանրապետութեան Պատւիրակութեան «Գործ»-երը բաւական ուշ անցան իմ ձեռքը, երբ արդէն գրքի խոշոր մասը պատրաստ էր, որով մի շարք կարևոր վաւերագրեր մնացին չօգտագործուած: Բացի այդ, գրքի ծաւալի և մի շարք ուրիշ պատճառներով պէտք եղաւ սկզբնական ծրագիրը փոփոխել· — Պատմութեան վերջին շրջանը կրճատել և մի շարք գլուխներ դուրս թողնել: Յատկապէս, դուրս մնացին ծրագրուած տեսութիւնները Հայաստանի պետական կազմութեան ու զարգացման, քաղաքական կուսակցութիւնների, երկրի տնտեսութեան, մշակոյթի, մամուլի և այլնի մասին, որոնց համար հաւաքուած առատ նիւթը մնաց չօգտագործուած: Պէտք եղաւ դուրս թողնել և կենսագրականների մասը: Իսկ արտասահմանեան գործունէութիւնը շօշափուեց ամենանեղ սահմաններում:

Այս գրքի նախաձեռնութիւնը և հրատարակութեան ծախսը ամբողջապէս պատկանում է Հ·Յ·Դաշնակցութեան Ամերիկայի Կենտր·Կոմիտէին: Բացի այդ, եթէ գիրքը լոյս է տեսնում ներկայ ստւար ծաւալով, այդ գլխաւորապէս արդիւնք է «Նաւար» տպարանի ընդհ· տնօրէն Պ· Յ· Զաւրեանի բարեացակամ վերաբերմունքին: Թանգագին օժանդակութիւն ցոյց տուեց ինձ և օր· Ս· Յակոբեանը (տոդաշար), որի թափած ջանքերի շնորհիւ գիրքը հրապարակ եկաւ Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի օրերին: Գրքի ամբողջ սրբագրութիւնը — տաժանելի աշխատանք — անտրտունջ իր վրա առաւ Ա· Տէր-Օհանեանը: Գ· Բալայեանը մեծապէս օգնեց ինձ նիւթերի և նկարների հաւաքման և, առհասարակ, գրքի պատրաստութեան գործում: Երիտասարդ արուեստագէտ Գր· Թադէոսեանը պատրաստեց գրքի քարտէսները: Շնորհալի լուսանկարիչ Յ· Սեմերճեանը (Phébus) սիրով տրամադրեց իր նկարների ճոխ հաւաքածուն: Գրքի պատրաստութեան հետ կապուած աշխատանքներում կարևոր աջակցութիւն ցոյց տուեց ինձ և Աշոտը: Օգնեցին և ուրիշ ընկերներ և բարեկամներ: Ամենքին՝ իմ սրտագին շնորհակալութիւնը:

Ս· Վ·

1 Մայիս 1928

Փարիզ